Մշոյ դաշտի մէջ և ի հիւսիս Պուլանխ [1], Ճապաղ-ջուր, Կէօքսու, Բիւրակնեան լերան բնակչաց մէջ, Մա-նազկերտ և մանաւորապէս յԱլաշկերտ։ Արևելքէն մին-չև Ներբովթ և Գոգուր լեռներու ստորոտներն, հա-բաւային կողմէ մինչև Զուխուրներ, Խութայ լեռնա-կաններ և Սասուն։

Չորրորդ՝ Կարնոյ բարբառը ամբողջ բարձր հայք տարածուած է, նաև յարևելս և արևելեան հիւսիսէ Բասեան, ուստի Կաղզուան, Կարս, Շիրակ, Ալէքսան-դրապոլ, Ախլցխայ, Ախալքելէք և Էն։

Հինգերորդ՝ Խարբերդու բարբառն հոսանք մի կազ-մած է ի հիւսիս արևմուտս գլխաւորաբար, յարևմուտս և ի հարաւ արևմուտս ոլորք են, Քղի, Բալու, Ակն, Երզնկայ, Տիվրիկ, Արաբկեր և Էն, ուստի կանցնի փոքր հայք, կիջնայ սև ծովի եզրները, ուստի Պօլիս, ուր աղաւաղուած է։

Վեցերորդ՝ Արարատեան դաւառաբարբառն տա-բածուած է միայն Երևանեան դաշտի մէջ, ուստի Գառ-նի, Շարուր, Նախիջևան և ապա Ատրպատական։

Երևանեան դաշտի հիւսիսային բարձունքը, Արա-գածի արևելեան կողերուն վերայ կայ Աբարան դաւա-ռակն, որոյ ժողովուրդն դեռ կը խօսի Բաղրևանդայ բարբառով, ուստի և գաղթած են, նոյնպէս Ցևանայ ծովի շուրջն գտնուած ամբողջ գիւղօրայք կը խօսին այն դաւառաբարբառով ուստի որ գաղթած են, այ-սինքն Պայազիտի, Դիատինայ և Ալաշկերտի բարբա-ռով, ոմանք ևս Խոյա բարբառով։

---

1. Պուլանխայ բարբառին մասնաւոր ինչ խառնուած է Բաղշոյ բարբառն։